

Եւրոպացիներ, ինչպէս Ռուի Կոնզալէս տէ Գլաւիսոյ (1403 – 1406) իբր Սպանիական ղեկաւան Թիմուրլէնկի երթալու ատեն Արաբատեան դաշտէն կ'անցնի ու կը գրէ. «Լեռան ստորոտի հովիտներուն մէջ քերմիզ միջատը կը գտնուի, ասով մետաքսը կարմիր կը ներկեն»⁽⁵⁸⁾ : Ու Թրանսադի Սըր Ճան Շարտէն 1672ին կը գրէ. «Միջատակարմիրը, որ ամէնէն մասնայատուկն է այս կողմերուն (Մարանդի), կը հաւաքեն մերձակայ վայրերուն մէջ, փոքր քանակութեամբ միայն, եւ այն ալ ամառուան ութը օրերու միջոցին, երբ արեւը Առիւծ համաստեղութեան մէջ է : Երկրին բնակիչները մեզ կ'ազահովցնեն որ այդ ժամանակէն առաջ (որդը) չի հասուննար, իսկ այդ ժամանակէն վերջ միջատակարմիրն որդը կը ծակէ տերեւը, որուն վրայ կ'աճի, եւ այսպէս կը կորսուի : Պարսիկները միջատակարմիրը քերմիզ կը կոչեն, քերմէն՝ որ կը նշանակէ որդ, որովհետեւ որդէ կ'արտադրուի»⁽⁵⁹⁾ :

Մեր մատենագրութեան եւ նախնեաց թարգմանութեանց մէջ յաճախ կը հանդիպինք Որդանին կամ քերմիզին (խըրմըզի սամկօրէն) : Օրինակ Յիսուս Որդիի մէջ

Եւ յարեմէ գոյն յորդանի

Իսկ դարձեալ երկու տող վերջ

Զյորդան կարմիր արեան գունին :

Կոստանդին Երզնկացին իր ԺԲ տաղին երրորդ տան մէջ

Վարդն որ եհան զկանանչ կապան՝ եւ հագնի զիր խըրմըզին :

որուն կրկնութիւնն է ԺԱ տաղին եօթներորդ տան այս տողը .

Հանէ զկանանչ կապան՝ ու հագնի զիր խըրմըզին :

1931ին Երեւանի Պետական թանկարանին ձեռագիր 371 Գանձարանին մէջ հանդիպեցայ (էջ 8ա .) ԽԱՉԱՏՈՒՐԻ կաղմով քառեակներու սկզբնատառերով դանձի մը, որուն Ի գրին քառեակին մէջ կը կարդամ .

Ով ոսկեքել մուրուս վարդագոյն

Դու ներկեցար արեամբ յորդանոյ :

Եւ այսպէս անհատնում կարելի է շարունակել շարքը :

Որդանով գորգեր ներկուած ըլլալուն ընտիր մէկ վկայութեան

(58) Embassy to Tamerlane, 1928, p. 143.

(59) Travels... London, 1686, p. 351.

Քառացիօրէն իրմէ օգտուած է Kotzebue. — Narrative... London, 1819, էջ 145 : Հետաքրքրական է որ Ency. Britanica ի բառ Kermes կը նշանակէ. միայն 1714ին ստոր յիշատակուած ըլլալը կը հասկցուի : Ինչ որ սխալ է երբ վաղուց ծանօթ էր Եւրոպացի ճամբորդներու, ինչպէս Գլաւիսոյի եւ Շարտէնի :